

Հավելված T2: Արձանագրություն K-12 Դպրոցներում COVID-19-ի Բացահայտման Կառավարման Ծրագրի մասին

Վերջին Թարմացումները՝
8/23/20: Տեսչին Մեկուսացման Ժամանակահատվածը փոխվել է՝ 72 ժամից 24 ժամի՝ առանց ջերմության: Այն ժամանակահատվածը, երբ անձը համարվում է վարակող, փոխվել է՝ 48 ժամից 2 օրի՝ մինչև ախտանշանների ի հայտ գալը: Տրամադրվել է լրացուցիչ պարզաբանում համաճարակային դեպքերի մասին և թարմացվել են COVID-19-ի բռնկման Չափանիշների մասին տեղեկությունները (Փոփոխությունները նշված են դեղինով):

COVID-19-ի հետ շփման վերաբերյալ հանրային առողջապահության նպատակաուղղված արձագանքը համայնքային մակարդակով, կարող է օգնել առավելագույնի հասցնել COVID-19-ի արձագանքի պատասխանը, Լոս Անջելեսի Երջանի Հանրային Առողջապահության Վարչության կողմից:

Տարրական և միջնակարգ դպրոցները, որոնք սպասարկում են մանկապարտեզից մինչև 12-րդ դասարանի աշակերտներին (K-12 դպրոցներ), հուսալի համայնքային գործընկերներ են, որոնք կարող են օգնել ՀԱՎ-ին՝ բարելավելու Հանրային Առողջապահության արձագանքի ժամկետը և ազդեցությունը՝ COVID-19-ի հետ Շփման Կառավարման Ծրագրի (EMP) արագ նախաձեռնումով, երբ տեղեկացվում է դպրոցում COVID-19-ի դեպքերի և խմբերի վերաբերյալ: Շփման Կառավարման Ծրագրի (EMP) անհապաղ իրականացումը դպրոցներում, երբ մեկ եզակի COVID-19-ի դեպք բացահայտվի, կարող է արագացնել վարակի կանխումը և թույլ չտալու դպրոցներում վարակի բռնկումները:

K-12 դպրոցներում COVID-19-ի 1, 2, 3 և ավելի դեպքերի կառավարման քայլերը նկարագրված են ստորև և ամփոփված են Հավելված Ա-ում: Քանի որ K-12 դպրոցներում COVID-19-ի հետ շփման կառավարման ռեսուրսների մակարդակը տարբեր կլինի, պահանջվող քայլերը նվազագույն պահանջվող տարրերն են, որոնք պետք է ներառվեն դպրոցի EMP-ում: Առաջարկվող քայլերը ներառում են ընտրովի տարրեր՝ բռնկման կառավարման համար, որտեղ դպրոցական ռեսուրսները բավարար են::

Վարակի Հետ Շփման Կառավարման Պլանավորումը՝ Նախքան Դպրոցում COVID-19-ի 1 Դեպքի Բացահայտումը

- Պահանջվում է. Դպրոցի COVID-19-ին Համապատասխան Նշանակված Աշխատանքային Թիմ, որը պատասխանատու է COVID-19-ի հետ կապված անվտանգության բոլոր արձանագրությունների կայացման և իրականացման համար, ինչպես նաև ապահովելու, որ աշխատակազմը և աշակերտները տեղեկացված լինեն COVID-19-ի մասին: Դպրոցի Նշանակված Աշխատանքային Թիմի մեկ անդամը նշանակվում է ՀԱՎ- ի հետ կապի պատասխանատու, եթե հաստատությունում COVID-19- իմբային դեպք կամ բռնկում լինի:
- Պահանջվում է. Ծրագիր, որով նախատեսվում է, որ բոլոր աշակերտները և աշխատակիցները, ովքեր COVID-19-ին նմանատիպ ախտանշաններ ունեն կամ կարանտինի մեջ են, որովհետև շփվել են դպրոցում վարակված(ներ)ի հետ, COVID-19-ի թեստավորման հնարավորություն ունենան կամ թեստավորվեն:

Վարակի Հետ Շփման Կառավարում` Դպրոցում COVID-19-ի 1 Դեպքի Ժամանակ

☐ *Պահանջվում է.* Եթե դպրոցը տեղեկացել է լաբորատորիայի կողմից հաստատված 1 դեպքի մասին, (աշակերտ կամ աշխատակից), Դպրոցի Համապատասխանության Աշխատանքային Թիմը պահանջում է, որ այդ անձը հետևի COVID-19-ի համար Տնային Մեկուսացման Ցուցումներին (www.publichealth.lacounty.gov/acd/ncorona_2019/covidisolation/):

☐ *Պահանջվում է.* Դպրոցի Համապատասխանության Աշխատանքային Թիմը տեղեկացնում է դեպքի վերաբերյալ, որին ՀԱՎ-ը ուղղակիորեն կհետևի Վարակի Դեպքերի և Շփումների հետաքննության ՀԱՎ Ծրագրի շրջանակներում` հավաքելու հավելյալ տեղեկատվություն և թողարկելու Հանրային Առողջապահության Պատասխանատուի Հրամանը տվյալ դեպքի Մեկուսացման վերաբերյալ:

☐ *Պահանջվում է.* Դպրոցի Համապատասխանության Աշխատանքային Թիմն աշխատում է վարակված անձի հետ` կազմելու աշակերտների և/կամ աշխատակիցների ցանկը, ովքեր շփվել են վարակի դեպքի հետ` վարակիչ լինելու ժամանակահատվածում. Դպրոցի համապատասխան պատասխանատուն, դեպքի մասին տեղեկանալու պահից 1 օրվա ընթացքում ՀԱՎ-ին տեղեկատվություն է տրամադրում` օգտագործելով [Կրթական ոլորտի համար նախատեղված COVID-19 դեպքի և շփումների ցանկը](#): Անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ ժամանակ կարող է պահանջվել: Ցանկը լրացնելու վերաբերյալ տեխնիկական օգնություն ստանալու համար` դիմեք ACDC-Education@ph.lacounty.gov:

- Անձը համարվում է վարակիչ իրենց ախտանիշներն ի հատ գալուց 2 օր առաջ մինչև այն պահը, երբ նրանցից այլևս չի պահանջվում մեկուսանալ (օրինակ` առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման ջերմություն չի գրանցվել առնվազն 24 ժամ ԵՎ այլ ախտանիշները բարելավվել են ԵՎ ախտանիշներն ի հայտ գալուց հետո անցել է առնվազն 10 օր). Անձը, ով COVID-19 թեստի դրական պատասխան ունի, բայց ախտանիշներ չունի, համարվում է վարակիչ, թեստը հանձնելուց 2 օր առաջ, մինչև թեստից հետո 10 օր:
- Անձը համարվում է վարակված, երբ նրան է վերաբերվում այս դեպքերից որևէ մեկը.
 - Անձը վարակված մարդուց 6 ոտնաչափ հեռավորության վրա է գտնվել 15 րոպեից ավելի, նույնիսկ եթե կրել է դեմքի ոչ-բժշկական ծածկոց;
 - Անձ, ով չպաշտպանված շփում է ունեցել վարակված անձի մարմնի հեղուկների և/կամ COVID-19-ով հաստատված անձի արտազատուկների հետ (օրինակ` հագացել կամ փռչուցել են վրան, նույն սպասքից է օգտվել կամ թքի հետ է շփվել, կամ խնամել է վարակվածին` առանց համապատասխան պաշտպանիչ միջոցների):

☐ *Պահանջվում է.* Աշակերտները և աշխատակիցները, ովքեր հաստատվել է, որ շփվել են դպրոցում վարակման դեպքի հետ, Դպրոցի Համապատասխանության Աշխատանքային Թիմի կողմից նամակով կամ հաղորդակցման այլ եղանակով տեղեկացվում են վարակի մասին: Դպրոցում Վարակի հետ Շփման Ծանուցում նամակի ձևանմուշը առկա է [Դպրոցական Հաստատությունների համար նախատեսված COVID-19 Ծանուցում Նամակի Ձևանմուշ](#) էջում: Վարակի հետ շփման ծանուցումը պետք է ներառի հետևյալ հաղորդագրությունները.

- Վարակված անձի հետ շփված աշակերտներն ու աշխատակիցները պետք է ստուգվեն COVID-19-ի համար` անկախ այն բանից, ախտանիշեր ունեն, թե` ոչ և թեստի արդյունքների վերաբերյալ տեղեկացնեն դպրոցին: Դա կսահմանի դպրոցում հիվանդության տարածման չափը և հիմք

կղաճնա հետագա վերահսկողության միջոցառումների համար: Թեստավորման ռեսուրսները ներառում են՝ Աշխատակիցների Առողջապահական Ծառայությունները կամ Մասնագիտական Առողջապահական Ծառայությունները, Աշակերտների Առողջապահական Կենտրոնները, Անհատական Առողջապահական Մատակարարները, Թեստավորման Համայնքային Կենտրոնները. covid19.lacounty.gov/testing: Այն մարդիկ, ովքեր բժշկական մատակարար գտնելու օժանդակության կարիք ունեն, կարող են զանգահարել Լոս Անջելես Շրջանի Տեղեկատվական գիծ՝ 2-1-1 հեռախոսահամարով, որը գործում է 24/7:

- Վարակի հետ շփված աշակերտները և աշխատակիցները պետք է 14 օր կարանտինում մնան՝ վարակված անձ հետ վարակիչ լինելու ընթացքում (ինչպես վերը սահմանված է) վերջին շփումից հետո, նույնիսկ եթե իրենց կարանտինում եղած ժամանակահատվածում թեստի բացասական արդյունք են ստանում: Անձը, ով բացասական էր թեստավորվել, հետագայում կարող է հիվանդություն զարգացնել՝ ախտանշաններով կամ առանց դրանց, եթե թեստն արվել էր ինկուբացիոն շրջանում (օր.՝ հիվանդության հետ շփումից մինչև հիվանդության սկիզբը ընկած ժամանակահատվածում): COVID-19-ի Տնային Կարանտինի Ուղեցույցը հասանելի է՝ www.publichealth.lacounty.gov/acd/ncorona/2019/covidquarantine/:
- ՀԱՎ-ի վարակվածների և Շփումների Հետաքննության Ծրագրի միջոցով ՀԱՎ-ը անմիջականորեն կկապվի վարակվածի հետ շփված աշակերտների և աշխատակիցների հետ՝ լրացուցիչ տեղեկությունները հավաքելու և Առողջապահության պատասխանատուի կարանտինի հրամանը թողարկելու համար:

Առաջարկվում է. Դպրոցի Համապատասխանության Աշխատանքային Թիմը կորոշի, թե արդյոք անհրաժեշտ է լրացուցիչ ծանուցում՝ դպրոցական ավելի լայն համայնքին տեղեկացնելու դպրոցում վարակի դեպքի վերաբերյալ և COVID-19-ի տարածումը կանխարգելելու ձեռնարկված նախագրուշական միջոցառումների մասին: Ընդհանուր ծանուցման նամակի ձևանմուշը հասանելի է՝ [COVID-19 Template Notification Letters for Education Settings](#).

Վարակի Հետ Շփման Կառավարում՝ 14 Օրվա Ընթացքում Դպրոցում COVID-19-ի 2 Դեպքերի Ժամանակ

Պահանջվում է. 14 օրվա ընթացքում լաբորատորիայի կողմից հաստատված 2 դեպքերի հայտնաբերումից հետո (աշակերտներ կամ աշխատակիցներ), դպրոցը պետք է հետևի 1 հաստատված դեպքի համար պահանջվող քայլերին:

Առաջարկվում է. Դպրոցի Համապատասխանության Աշխատանքային Թիմը որոշում է, թե արդյոք 2 դեպքերը համաճարակաբանորեն կապված են, որը նշանակում է, որ երկու վարակված անձիք ինչ-որ մի պահի միասին միաժամանակ ներկա են եղել որևէ տեղում՝ նրանցից մեկի կամ երկուսի վարակիչ լինելու ընթացքում*:

**Անձը համարվում է վարակիչ իրենց ախտանիշներն ի հատ գալուց 2 օր առաջ մինչև այն պահը, երբ նրանցից այլևս չի պահանջվում մեկուսանալ (օրինակ՝ առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման ջերմություն չի գրանցվել առնվազն 24 ժամ ԵՎ այլ ախտանիշները բարելավվել են ԵՎ ախտանիշներն ի հայտ գալուց հետո անցել է առնվազն 10 օր): Անձը, ով COVID-19 թեստի դրական պատասխան ունի, բայց ախտանիշներ չունի, համարվում է վարակիչ թեստը հանձնելուց 2 օր առաջ, մինչև թեստից հետո 10 օր:*

- Վարակված դեպքերի միջև համաճարակաբանական կապերի հայտնաբերումը կարող է պահանջել հետազոտ քննություն՝ գնահատելու վարակի պատմությունը և հայտնաբերելու համար բոլոր հնարավոր վայրերը և այն անձանց, ովքեր կարող են վարակվածների հետ **տվյալ հաստատության տարածքում** շփված լինել՝ նրանց վարակիչ լինելու ընթացքում: **ՕԱՆՈՒՅՈՒՄ՝** Էպիդեմիոլոգիական (համաճարակային) կապերը ներառում են անձանց, ովքեր ունեն նույնականացնելի կապեր իրար հետ՝ ինչպես օրինակ ֆիզիկական տարածքը համատեղ բաժանելը (օրինակ՝ դասարանում, գրասենյակում կամ հավաքույթների ժամանակ), որը մատնանշում է հիվանդության փոխկապակցված տարածման ավելի բարձր հավանականությունը տվյալ հաստատությունում, քան եզակի փոխանցումը ավելի լայն համայնքի շրջանակում: Համաճարակաբանական կապերի գնահատման աշխատանքների օժանդակող գործիքը հասանելի է՝ [Կրթական ոլորտի համար նախատեսված COVID-19 Վարակի հետ շփման հետաքննության թերթիկ](#): Համաճարակաբանական կապերի գնահատման վերաբերյալ մասնագիտական օժանդակություն ստանալու համար, խնդրում ենք դիմել՝ ACDC-Education@ph.lacounty.gov:
- Եթե համաճարակաբանական կապեր չկան, դպրոցը կշարունակի վարակի հետ շփման կանոնավոր կառավարումը:
- Եթե կան համաճարակաբանական կապեր, ապա դպրոցն ուսանողներին և աշխատակիցներին ուղղված նախազգուշական միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ ուղերձներ է կիրառում, որպեսզի դպրոցում կանխվի վարակի տարածումը, ներառյալ տվյալ հաստատությանն առանձնահատուկ միջամտությունների իրականացումը:

Վարակի Հետ Շփման Կառավարում՝ 14 Օրվա Ընթացքում Դպրոցում COVID-19-ի ≥ 3 Դեպքերի Ժամանակ

Պահանջվում է. Եթե դպրոցը 14 օրվա ընթացքում հայտնաբերի լաբորատորիայի կողմից հաստատված 3 կամ ավելի վարակի դեպքերի խումբ (ուսանողներ և/կամ աշխատողներ), ապա դպրոցը պետք է իրականացնի հետևյալ քայլերը.

- Զեկուցել վարակված խմբի վերաբերյալ ՀԱՎ Սուր Վարակիչ Հիվանդությունների Վերահսկման (ACDC) Կրթական Ոլորտի Թիմին՝ ACDC-Education@ph.lacounty.gov էլեկտրոնային հասցեով կամ զանգահարելով (888) 397-3993 կամ (213) 240-7821:
- Լրացնել *Վարակված դեպքերի և շփումների ցանկը*, որը հասանելի է՝ [COVID-19 Case and Contact Line List for the Educational Sector](#) և ուղարկել այն ACDC-Education@ph.lacounty.gov. Ցանկը լրացնելու վերաբերյալ մասնագիտական օժանդակություն ստանալու համար, դիմեք՝ ACDC-Education@ph.lacounty.gov.
- ACDC Կրթական Ոլորտի Թիմը կդիտարկի *Վարակված դեպքերի և շփումների ցանկը*՝ պարզելու թե արդյոք համապատասխանում է բռնկման չափանիշներին: ACDC թիմը 1 օրվա ընթացքում կկապնվի դպրոցի հետ՝ խորհուրդ տալու հետագա քայլերի վերաբերյալ:
- Եթե բռնկման չափանիշներին չի համապատասխանում, դպրոցը կշարունակի վարակի հետ շփման կանոնավոր կառավարումը:
- Եթե բռնկման չափանիշներին համապատասխանում է, ակտիվացվում է ՀԱՎ Բռնկման Կառավարման Մասնաճյուղը (OMB):
- Նշանակվում է Հանրային Առողջապահության OMB քննիչ, որը դպրոցի հետ կհամակարգի վարակի բռնկման կառավարումը բռնկման հետաքննության ընթացքում:

- Դպրոցի Համապատասխանության Աշխատանքային Թիմը OMB քննիչին կտրամադրի պահանջվող տեղեկատվությունը, ներառյալ՝ *Վարակված դեպքերի և շփումների ցանկում* թարմացումները, մինչև բռնկումը վերացվի (օր.՝ վերջին հաստատված դեպքից հետո առնվազն 14 օր):

☐ *Առաջարկվում է*. Մինչ վարակված խմբի մասին ՀԱՎ Սուր Կարակիչ Հիվանդությունների Վերահսկման (ACDC) Կրթական Ոլորտի Թիմին զեկուցելը, Դպրոցի Համապատասխանության Աշխատանքային Թիմը պետք է որոշի, թե արդյոք խմբի մեջ առնվազն 3 դեպքեր համաճարակաբանական կապեր ունեն: Համաճարակաբանական կապերը գնահատելուն օժանդակող գործիքը հասանելի է՝ [Կրթական ոլորտի համար նախատեսված COVID-19 Վարակի հետ շփման հետքննության թերթիկ](#):

COVID-19-ի Բռնկման Չափանիշները K-12 Դպրոցների համար

14 օրվա ընթացքում դպրոցում միևնույն ընտանիքի անդամ չհանդիսացող և դպրոցի տարածքից դուրս միմյանց հետ սերտ շփում չունեցող անձանց մոտ լաբորատորիայի կողմից հաստատված առնվազն 3 դեպքեր՝ COVID-19-ի ախտանշաններով կամ առանց ախտանշանների, որոնք համաճարակաբանորեն կապված են*:

**Դպրոցի խմբերը ներառում են մարդկանց, ովքեր ընդհանուր անդամակցություն ունեն դպրոցում (օր.՝ դասարան, դպրոցական միջոցառում, դպրոցական արտադասարանային միջոցառում, ակադեմիական դաս, մարզական թիմեր, ակումբներ, տրանսպորտ): Համաճարակաբանական կապերը պահանջում են, որ վարակված անձինք վարակիչ լինելու ընթացքում ինչ-որ պահի նույն ժամանակահատվածում միևնույն միջավայրում են գտնվել: :*

Հավելված A: Դպրոցում COVID-19-ի 1,2 և 3 Կամ Ավելի Վարակվածության Դեպքերի Կառավարման Քայլեր

- 1 Դեպք**
- 1) *Պահանջվում է*. Դպրոցը հրահանգում է վարակվածին հետևել COVID-19 Տնային Մեկուսացման Ցուցումներին (a).
 - 2) *Պահանջվում է*. Դպրոցը տեղեկացնում է վարակվածին, որ ՀԱՎ-ը անմիջականորեն կկապվի նրա հետ՝ հավելյալ տեղեկավորություն հավաքելու և Առողջապահության Պատասխանատուի Մեկուսացման Հրամանը թողարկելու համար: (a).
 - 3) *Պահանջվում է*. Դպրոցը պետք է աշխատի վարակվածի հետ, որպեսզի հայտնաբերի դպրոցական շփումները:
 - 4) *Պահանջվում է*. Դպրոցը տեղեկացնում է* վարակի դպրոցական շփումների վերաբերյալ և հանձնարարում նրանց տանը կարանտինում մնալ և COVID-19-ի թեստ հանձնել:
 - 5) *Պահանջվում է*. Դպրոցը տեղեկացնում է դպրոցի կոնտակային անձանց, որ ՀԱՎ-ը անմիջականորեն կկապվի իրենց հետ՝ հավելյալ տեղեկավորություն հավաքելու և

	<p>Առողջապահության Պատասխանատուի Կարանտինի Հրամանը թողարկելու համար (b):</p> <p>6) <i>Պահանջվում է.</i> Դպրոցը հավաքում է վարակվածի և հարակից շփումների վերաբերյալ տեղեկատվությունը, օգտագործելով Կրթական Ոլորտի Համար Նախատեսված COVID-19 Վարակված անձի և Շփումների Ցանկը և ուղարկում ՀԱՎ հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ ACDC-Education@ph.lacounty.gov:</p> <p>7) Առաջարկվում է. Դպրոցը ընդհանուր ծանուցում է ուղարկում * դպրոցական ավելի լայն համայնքին տեղեկացնելու դպրոցում վարակի դեպքի վերաբերյալ և տարածումը կանխարգելու ձեռնարկված նախազգուշացումների մասին: *Ընդհանուր ծանուցման նամակի ձևանմուշը հասանելի է՝ COVID-19 Template Notification Letters for Education Settings.</p>
<p>2 Դեպքեր</p>	<p>1) <i>Պահանջվում է. Հետևեք 1 հաստատված դեպքի</i> համար պահանջվող քայլերին:</p> <p>2) <i>Առաջարկվում է.</i> Եթե 2 դեպքերը տեղի են ունենում 14 օրվա ընթացքում, դպրոցը որոշում է, թե արդյոք դեպքերը համաճարակաբանորեն կապված են*: Համաճարակաբանական կապերի գնահատման աշխատանքներին օժանդակող գործիքը հասանելի է՝ Կրթական ոլորտի համար նախատեսված COVID-19 Վարակի հետ շփման հետքննության թերթիկ: Եթե epi կապեր առկա են, ապա ECE հաստատությունները կիրառում են վարակի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ:</p>
<p>3+ Դեպքեր</p>	<p>1) <i>Պահանջվում է.</i> Եթե 14 օրվա ընթացքում 3 կամ ավելի վարակի դեպքերի խումբ է հայտնաբերվում, դպրոցը պետք է տեղեկացնի ՀԱՎ՝ ACDC-Education@ph.lacounty.gov.</p> <p>2) <i>Առաջարկվում է.</i> Մինչ վարակված խմբի վերաբերյալ ՀԱՎ տեղեկացնելը դպրոցը պետք է որոշի, թե արդյոք խմբի մեջ առնվազն 3 դեպքեր համաճարակաբանական կապեր ունեն: Եթե համաճարակաբանական կապեր չկան, դպրոցը կշարունակի վարակի հետ շփման կանոնավոր կառավարումը.</p> <p>3) <i>Պահանջվում է.</i> ՀԱՎ-ը պահանջում է, որ դպրոցի կողմից լրացվի Կրթական ոլորտի համար նախատեսված COVID-19 Վարակի հետ շփման հետքննության թերթիկը՝ որոշելու համար, թե արդյոք համապատասխանում է բռնկման չափանիշներին: Եթե բռնկման չափորոշիչները բավարարվում են, ապա Հանրային Առողջապահության Վարչության Կառավարման Մասնաճյուղը (OMB) կգործարկվի, և OMB Քննիչը կապ կհաստատի ECE հաստատության հետ՝ համակարգելու բռնկման քննությունը:*</p> <p>4) <i>Պահանջվում է.</i> Դպրոցը OMB քննիչին թարմ տեղեկություններ է տրամադրում, միջև</p>

բռնկումը վերացվի:

- (a) Առողջապահության Պատասխանատուի Հրամանը՝ անձանց հրահանգվում է ինքնամեկուսանալ մինչև առնվազն 24 ժամ ջերմությունն անցնելուց հետո (առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման) ԵՎ այլ ախտանիշները բարելավվել են ԵՎ ախտանիշներն ի հայտ գալուց հետո անցել է առնվազն 10 օր ԿԱՄ, եթե անձը ախտանիշներ չունի, դրական թեստավորումից հետո 10 օր անց
<http://www.publichealth.lacounty.gov/acd/ncorona2019/covidisolation/>:
- (b) Առողջապահության Պատասխանատուի Հրամանը՝ շփումներ ունեցողներին հրահանգվում է վարակված անձի հետ վերջին շփումից հետո 14 օր կարանտինում մնալ
<http://publichealth.lacounty.gov/acd/ncorona2019/covidquarantine/>